




1815

X- 3







Hentchak:

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE.



Journal Arménien

mensuel

XVIII Année

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

XVIII ՏԱՐԻ

Ներկայ համարով՝ «Հնչակը» մանում է իր գոյութեան տասնեւութերորդ տարեշրջանը։ Փոթորկալի գոյութիւն, որ անցել է, անպարտ կերպով, ամեն փորձութիւնների բոլից և դրել իր դրոշմք վերջին քսանամեակի հայկական կեանքի վրայ։ Գաղղափարը, որ նա քարոզել է, գործը, որ նա տռաջ է ըերել ու մղել, ընդարձակ են ու մեծ։ «Նա չէ հասել զեռ ինքն իրա տռաջ դրած պրօրէմների յազթանակներ, որոնք հսկարական են և պահանջում են ամբողջ սերունդների աշխատութիւն։ Բայց նա բացել է ուղին որը տանում է զեպի այդ պրօրէմների իրագործումը, նա որոշել է այն առաջնազաց և լայն հոսանքը, որ անհանդուրժելի կերպով ձգուում է զեպի մօտակայ և հեռաւոր նպատակները, նա մաքրել ու սերմանել է այն ասպարէզը, որը տեղել է հայ ժողովուրին քաղաքական ու յեղափոխական կրթութիւն և տարածել, լայնածաւալ ու կենաւու, հասարակական բեղմնաւ որ դորձունէութեան համար։

«Հնչակը» հէնց իր առաջին տարեշրջանից զիմագրաւելով ամեն կողմից տեղացած կատաղի յարձակումներին, պարզել է զիտական սօցիալիզմի դրոշը և այդ դրոշն է եղել նրա գաղափարական գոյութեան հիմնաքարն ու փարոսը։ Ճիշտ է, այդ գաղափարը մնաց միայն թէօրիական զրութիւն, գրւած Հնչակեան ծրագրում, կազմելով վերջինիս հիմնական բաժինը։ Նա չանցաւ կեանքի մէջ թէրեւ գործունէութիւն։ Բայց ոռւսահայ կեանքն այն ժամանակ հազիւ եր սկսել մանել կապիտալիստական շրջանը, որով, ուրեմն, հող չը կար սօցիալիստական դորձունէութեան։ Խոկ թիւրքահայ կեանքն առաջ էր ըերել ու ապագային ինքնավարութեան խնդիր, ճանաչւած և ընդունւած իրեւ այդպիսի, պաշտօնական կերպով, եւրոպական մեծ պետութիւնների կողմից։ Եւ հէնց այդ իրականութիւնն էր պատճառ, որ Հնչակեան ծրագիրն անկարող եղաւ, չունենաւով զեռ հայ պրօրէլ է տար իրա առաջ կոչը և առաջ զցել սօցիալիստական գաղափարը,

բերել մեր այն ժամանակ և այս կեանքում, սօցիալիստական, գասակարգային գործունէութիւններ սօցիալիստական միավոր մնաց, այդպիսով, ամայն բարբառոյ յանապատիս, մինչդեռ նրա մօտակայ, սամկավարական սահմանադրական նապատակը իրա իրագործման ձգտումների համար անմիջապէս գտաւ պարարտ հող թիւրքահայ խնդրում — և այդական էլ առաջ եկան թիւրքահայ նշանաւոր յեղափոխական դործն ու շարժումները։

Մեր փութեան, գաղափարապէս անպատճառաւ և իրականութեան նկատմամբ անփորձառու հակառակորդները, առանց կարսղանալու քըննել պատմական զրութիւնը և իրականութիւնը, աժանագին գատապարտութիւններ են թափում Հնչակեան անցեալ գործունէութեան վրայ, մեղագրելով «Հնչակ» հակառակ առ ո ու թե ո ն մէջ, թէ թէօրիապէս իրան ներկայացնելով սօցիալիստ, Հնչակեան գործնական ընթացքը եղել է ազգայնական։ Մենք նրանցից չենք, որ վախենում են բառերից, մենք նրանցից չենք, որ աչք են փակում իրականութեան առաջ։ մենք նըրանցից ել չենք, որ խոյս են տալիս ինքնաքըննութիւնից, և զինւած անցեալի փորձառութեամբ մենք մեզ աւելի ևս պատասխանաւու ենք նըրակատում ապագայի վիրաբերութեամբ։

Եւ սակայն ակներեւ է, որ մեր «սօցիալիստ» հակառակորդները այսօրւան բառերը գործածում են երէ կւան իրականութեան նկատմամբ։ Գա մի շատ աժանագին բանակուլի շուկայ է, որ ապացոյց է միայն բանակուլոնների խակութեան մեր ամենամօտիկ անցեալի պատմութեան մէջ։ Եւ երբ մենք ասում ենք, թէ այսօրւան բառերը նըրանք անսեղի կերպով գործածում են երէ կւան իրականութեան նկատմամբ, զրա հասաւառութեան համար առաջ ենք բերում հետեւեալ անհերքելի գրութիւնը։

Հայերի մէջ «Հնչակ» եղել է առաջ զինը, որ Հնչակեան ծրագիրն անկարող եղաւ, չունենաւով զեռ հայ պրօրէլ է տար իրա առաջ կոչը և առաջ զցել սօցիալիստական գաղափարը,

որպէս և գարձեալ ո Հնչական է եղել առա ա
ջինը, որ հնչեցրել է յեղափոխական
կոչք: Եթէ կւայ — տանիեւութ տարի առաջ
— հայկական իրականութիւնն աշն պէս է
եղել, որ սօցիալիստ ական գաղափարը
մացել է միայն թէօրիական գրութիւն
մի խումբ գաղափարական անձերի հայեցողու-
թեան մէջ և մէկերկու խումբ բանութական
շրջաններում Կովկասում: Այդ գաղափարական
գրութիւնը գործնուկանի մէջ անցաւ միայն այն-
չափ, որ տարիների ընթացքում, «Հնչական»
«Գաղափարանում և մի շարք բրոշւրներում
լոյս ընծայւեցան ինքնուրոյն ու թարգմանական
գրւածքներ գիտական սօցիալիզմի սերմերի հա-
մար, սահմանափակեց Հնչակեան սօցիալիզմ
ական գործը տեսական շրջանի մէջ: Այդպիսով իրականութիւնը, տակա-
ւին անպատճ առաջ սօցիալիզմի սերմերի հա-
մար, սահմանափակեց Հնչակեան սօցիալիզմ
ական գործը տեսական շրջանի մէջ: Մինչդեռ միւս կողմից, ընդհակառակը, նոյն այդ
երեկուան իրականութեան մթնոլորտում բերաւոր
ու որոտալից արձագանդ գտաւ Հնչակեան յե-
ղափառ կոչը իր ուամկափարական ձրդ-
տութերով, և թիւրքաց Հայաստանի ազգա-
յին իրականութիւնը յայտնեցաւ հասսուն
այդ կոչի համար: Որուսաստանում հայ աղ-
դա յին նոնդիր չը կայ, չը կար և չէր կա-
րող լինել — և արդ պատճառով էլ ուուսահա-
մերի յեղափառ կան ձգութներն իրանց
բնական ասպարէզը գտան թիւրքահայ կեանքում:
Որուսահայ իրականութեան մէջ այն ժամանակա-
նա ական պրօլետարիատը դեռ հազիւ իր սաղ-
մային վիճակում եր գտնուում — և արդ պատ-
ճառով էլ Հնչակեան սօցիալիստական գաղափա-
րը դոր ծնական հող չունեցաւ: Հակա-
սութիւնն. այս, եթէ մեր «սօցիալիստ» հակա-
ռակորդներն անպայման ուզուում են գործածել այդ
բառը, բայց «հակասութիւն» երէ կւայ և
այս օրուայ իրականութեան մէջ որ
և գրօշեւեցաւ Հնչակեան ուղղութեան վրայ, և
չէր կարող չը դուշմւել քանի որ հա-
սարակական գործունեւութեան պայառ մասն ը-
րու շողն իրականութիւնն է և միայն իրա-
կանութիւնը: Բայց զա հակասութիւն չէ դա
պատճական երկու տարրեր ըօպէնէն երի
իրականութեան առաջ բօպէի իրականութեան մէջ՝
Հնչակեան ուղղութիւնը կարող էր միայն
տեսական անուղղութեան սօցիալիստական
միայն լինել և առանց ապատամբութեան յարմար բօպէ:

մանների շնորհով ամփոփեց թիւրքաց Հայաս-
տանում և ընդունեց — և չէր կարող ընդունել
— այն ձեւը, կերպարանքը և իմաստը, որ պայ-
մանաւոր ել և սահմանել էր թիւր-
քահայ իրականութիւնը:

Այդպէս էր երէկ: Տարբեր է այսօր:
Այսօր կայ երկու գործ, մէկը միւսից
տարբեր իրանց իմաստով, պատմական գրու-
թիւններով, ուրիշն և պահանջներով:

Մէկը թիւրքահայ խնդիրն է, որ միշտ ար-
ձանացած է իր բաց վերքով, մի խնդիր, որ կը
մնայ և կը հրահրւէ պարբերաբար, քանի որ
գոյութիւն ունի թիւրքաց Հայաստան և թիւր-
քահայը, քանի որ գոյութիւն ունի Եւրոպայի
կողմից պաշտօնապէս ծանազւած մէկ իրաւունք,
որի պահանջնը ու տէրն է թիւրքահայը: Այդ
երկուում, այդպիսի հիմունքների պատճառով, յեշ
զափոխական գործը ծագել է, կայ, և կը յաշ-
րաւեւէ, միշտ ձգակով իր նպատակների իրա-
գործման: Ներկայ քաղաքական, որպէս և երկ-
րի պայմանները, սակայն, հիմնովին տարբեր են նախ-
կինից և այդ պատճառով էլ պահանջնը են գոր-
ծունեւութեան նոր մեթօդ: Այդ մեթօդն է
ընդհանուր ապատամբութեան նախապատճառ
բաստութիւն և թիւրքահայ յեղափոխական կազ-
մակերպութեան նոր ձեւ: Այդ ձեւն է նոյն իսկ
երկուում, իրանց յեղափառ ական սահման-
ներում ինքնուր ու պատճառով յին յանձնա-
լու մը երի հաստատումն, որոնք միշ-
տահանդիւմ գտնւած բոլոր մասնաձիւզէրի ընտ-
րւած մի կենարօնական մարմնն Պէտք է խը-
տացնել թիւրքաց Հայաստանի նոյն իսկ ան-
շական հակառական ոյժերը և ամփոփել
նրանց մի կողմից իրբեւ վարչական և միւս կող-
մից զինւորազրական կազմակերպութիւններում,
որոնց արւած մէկ և ընդհանուր հրահանգը պի-
տի լինի և նախապատճառութիւն և առանց
որ և է մասնակի շարժումների սպասողական
գիրք, մինչեւ որ եւրոպական քաղաքականութեան
մէջ կը սահեցւէ ապատամբութեան յարմար բօպէ:

Բայցութիւնն այլ է ո Հնչականի ահեսողութիւն-
որ միւս, Կովկասան, գործի վրայ: Այսօր հայ
իրականութիւնն արգէն առաջ է բերել Կովկա-
սում: Հայ պրօլետարիատ գտասիարդ: Աւ ո Հնչ-
ականը վեր բարձրացնելով իր հիմնական սօցիալ-
իստականութիւնը պատմական սկզբունքները, որ դեռ

տասնեւեօթ տարի առաջ՝ արձանադրւել են իր ծրագրում, անցնում է և արդէն անցել է այդ սկզբունքների զուտ տեսական քարոզից զէսի գործնական ասպարէզը: Կա դարձրել է իւրը Առ Առ Տռ Աշեան ծրագիրը, պրօէտարիատի գասակարգային զործն ու զրօշը: Կա ամփոփում է իր Առվկասեան կազմակերպութիւնների բանւորական ոյժերն այդ զործի ասպարէզը: և այդ զրօշի տակ: Կա մղում է կոչւ ընդդեմ կապիտալիզմի յանուն սօցիալիզմի և ընդդէմ ցարիզմի յանուն հանրապետական ռամկավարական սահմանադրութեան: Կա համարում է մէկ և ընդհանուր առհասարակ միջազգային պրօէտարիատի մեծ ու մարդկութեան ազատարար գործը, որպէս և մասնաւորապէս՝ Որուսաստանի բոլոր ազգութիւնների ընդհանուր պրօէտարիատի սուրբ գործը: Կա ախոյիեան է բոլոր ազգերի պրօէտարների համագործակցութեան ու միութեան: Կա մարանչող է ժողովադաշտին, գեղջկական ու քաղաքային, աշխատաւոր, կեղեցւած ու շահագործւած մասնաների բաշօրութեան համար, որ կարող է իրագործել միայն սօցիալիզմի յաղթահակով:

Այս ապացուցանիլու համար, որ Հնչակիան-
ները վճռականապէս արգէն անցել են սօցիալ-
գէմոկրատական ասպարէզ և որ մեր ֆանֆա-
րօն, մեծախոս և անդորք սօցիալիստ», «Փէ-
գէրալիստ», «նացիօնալիստ» և այլն հակառա-
կորդների կողմից մեր գէմ արձակած ո հակա-
սութեան» և այլ մեջադրանքները ո՛չ այլ ինչ
չեն, եթէ ո՛չ պարապ մաքի և զրգուած ջր-
դերի տրգասիք ու պառաւական վայնասուններ.
ապացուցանիլու համար, որ նրանք իրանց ան-
զօր արձակումներով մեր գէմ ցոյց են տալիս
իրանց ապիկարութիւնը միայն և, որ զլիսաւորն
է, իրանց անձշմարտասիրութիւնը, — մենք տուած
կը բերենք հետեւեալ փաստը: —

Ահա արդէն շարաթներ են, ինչ ամերող քանուորական Բագռան ու շրջակալը հսկայական գործադուլի մէջ են: Դա իր քաղաքական նոր շահուակութեամբ արդէն մեծ լինելով, հանդիսանում է նաև մի մեծ երեսյթ և ապագոյց սօցիալ-դէմոկրատական գործունէութեան ու զօրութեան Ուուսաստանում: Եւ ովէ այդ մեծ գործը կատարողն այսօր: Դա՝ միւս ազգերի քանուորական կազմակերպութիւնների չետ միացած, Բագռան Հնչակեան բոլոր կազմակերպութիւններն են: Գաշնակականները, համաձայն իրանց մանրաքանչութուական նացիօնայիզմի, յարանելեցան: Հա կ առ ա՛ բան որտեան շարժման

և մաժնաւորապէս Շաղուի գործաթողների դէմ մհրատարակեցին ոթուցիկներ։ . . . Շայց թողնենք զրանց հանդիսաւ Պրօլէտարիատն ըլքն զիտէ, որ զրանք թշնամի են իրան։ Միւս կողմից մի բուռ ամեն գոյնի ոֆէզէրալիստ սօցիալիստներն էլ, ի հարկէ, ոչ մի բաժին ըունեն այդ շարժման մէջ։ Պրօլէտարական այդ կոմիջ մղում են Հնչակեանները, որոնց այնպիսի ֆանֆարօնական փութիւնութեամբ նացիօնալիստն անւանում մեծախոս ու խառնիճազանձ հակառակորդները։ Այո՛, Շաղուի Հնչակեան կազմակերպութիւններն են, որ գործով ապացանում են իրանց սօցիալ գէմօկրատիզմը, որ միացած Ոռուսաստանի Ա.Վ. Տ. Խուսակցութեան կազմակերպութիւնների հետ, համերաշխաբր ու միասին մղում են մեծ գործադուր և հնչեցնում իրանց սօցիալ գէմօկրատական խօսքը, օրը մի քանի անդամ, բիւրաւոր գործաթող բանս որներից կազմւած բացողեայ միախնդներում։ Այո՛, գործով է, որ Հնչակեան անունը գալիս և միանգումից ընդ միշտ կապւում է Խոցիսլ Գէմօկրատիային։ Եւ այսպէս, այդ երեսյթը — մեծ հայոց կեանքում — եղբայրութեան և կատարեալ ու ներգաշնակ համագործակցութեան գաշինք է կնքում Հնչակեան Ա.Վ. թեան և Ա. Ա. Վ. Տ. Խ. թեան միջև, հայ պրօլէտարիատի և Ոռուսաստանի ուսւ և միւս աղջերի պրօլէտարիատի միջև, և այդպիսով կատարում միջազգային պրօլէտարիատի ու Խոցիսլ Գէմօկրատախայի հետ Եւ այդ երեսյթը Հնչակեան գործունէութեան մէջ բացում է մի նոր մեծ գարագուխու։

ԲԱԳՈՒԻ ԳՈՐԾԱԴՈՒՅԸ

Վինչը եռ ցարի միապետութեան զինւորական
ոին գարին ընկնում է Պօրտ-Արթիւրի անկումով,
չգեռ ց սրբ կերծապատիք որեւ Փօրմերի ու կազակ՝
առամ է հարել ամրոցը Ուուստատանին՝ փրկելու հա-
ր իր ոճրացործ գոյութիւնը որի օրերն այլ ևս
շւտած են, մինչդեռ Վանջուրիայում թշտառ գոր-
րը կուղւում են ցրտից ու քաղցից, ոչնարիներ,
ցարիկներ ձեւը վ տա առծ են այն հեռաւուր զար-
ուի սպա զանցը, այս կազմ, Ուուստատանի լի-
ու ու գե օկր հ սոր կութինների մեջ, Զէմ-
ոգների կազմից սահմանագրական պայքարն է շա-
նակ տուաջ մղում, այս կազմ նաև զդրգում են
սաստանի կազմակերպութ որոշետարիատի շարժում-
նն ու գործուս լին ը զգեմ ցարիկի, ընդդեմ
պիտի զգմի բնի զէմ պա և ազմի և յանուն ում-

կավարական սահմանադրութեան։ Լեհաստան, ուր պարբերաբար պայման են սօցիալ-դեմոկրատական ցոյցեր, մեծ և արինալի, կովկաս, ուր Բագւում այսօր տսկուին գլուխում են բանւորների հսկայական գործադուլի դէպքերը, հանդիսանում են կարապետները Ռուսաստանի յեղափոխական պայքարի ներկայումս, առաջ են բերում այն գործն ու մեթօդը որով միայն կարելի է կործանել ցարիզը և իրադորել մատակայակը, ռամկավարական սահմանադրութիւնը ընդհանուր և ուղղակի քեւարկութիւնը մասնալի, խօսքի, խղճի, գումարութիւնների, ընկերութիւնների և այլ քաղաքական ընդարձակ ազատութիւնների պահանջերը։ Այդ մեծ շարժումները նախանշաններն են Ռուսաստանի ընդհանուր պրոլետարիատի յեղափոխական շարժումների, որոնք առաջ կը գան, կը ծաւուեն, կը դգրկեն Ռուսաստանի ներկոյ իրականութիւնը և իրանց հոսանքի մէջ կառնեն Ռուսաստանի ամեն կենդանի տարրերի ազատարար գործողութիւններն ու ձգտումները և որոշելով նրանց իմաստն ու նպատակը, կը փրկեն վերջապէս, Ռուսաստանի ժողովրդներին ցարիզի անամօթ, ոճրագործ ու բիւրօկրատական բռնապետութիւնից։ Մենք ողջունում ենք Լեհաստանի բանւորներին, մենք ողջունում ենք մասնաւորապէս Բագուի բանւորներին, որոնք համախմբւած միեւոյն, իրանց ընդհանուր սօցիալ-դեմոկրատական դրօշի տակ, Ռուսաստանի Ս.-Դ. Բ. Կ. եան և Հնչակեան կուսեան միեւոյն դրօշի տակ, մզում են պրոլետարական մեծ կահել և ուղեցոյց են յայանում, ներկայ պատմական բօպէին, Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի առաջնազարց, վճռական յեղափոխական գործութեան։

Խմբ.

10 Յունիս, 1905

Դիագու, 14 դետ. 1904.— Այս առաւօտ պայթեց նաւթագործալին բանւորների ընդհանուր զորմազուր։ Առաւօտաւանից բռլոր զործարաններն արգէն կանգնած էին։ Կէս օրին բացողեալ մեծ միահնդ կայացաւ բազացից զուրու։ Գործագուն ունենալով հտնդերձ տրնտեսական պահանջներ, նաև բաղաբական է և ձեռնարկուու են մեծ ցոյցեր։ Ցուցան թուցիներ բաղաբական իմաստով և գործազուր և ցոյց անելու կոչով։ Ճշմէ ժամ գործազուրն ընդունում է հսկայական և ընդհանուր կերպարանը։ Թէ՛ բալանի, թէ՛ Բալանին, թէ՛ Բիբի-Էլբաթ, թէ՛ Սև բաղաբուր իր ըրբակայցով՝ բոլոր զործարանները, նաւթահանցերը, ոկրսած երէկանից, բոլոր զործարանների, սպառորութիւնն ու եռանզը աննկարազրելի են։ Հասարակութեան և ժաղավրդի վերաբերմունքը խիստ համակրական է։ Ոստիկանութեան և զօրքի հետ զեռընդհարում եղած չէ։ Գործադուլը, որպէս և զալից ամեն միտինցներ ու ցոյցեր, նախաձեռնուած, կազմակեր-

պած և զեկափարուս են Ռուսաստանի Ս.-Դ. Բ. Կ. եան և Հնչակեան Կ.-Եան տեղական կօմիտէաների կողմից՝ յատկապէս ընտրւած մի խառն յանձնախմբի ձեսցով։ Մ. Ա

Եամին և առաջ հարկ ենք համորում դնել այս աեղ յթուցիկներից երկուուր, որ ցրւած էին գործադուլի հետց առաջին օրերը։ Այդ երկու յթուցիկներն էլ պարզ կերպով որոշում են գործադուլ յթուցիկներն ու նպատակը, որպէս և քաղաքական ժամանակայարմարութիւնն ու նշանակութիւնը։ Պթուցից առաջին։

Պրօկետարներ բոլոր երկիրների, միացեք!

ԴՐԻՍԱՎԱՆԻ ՍՈՅ. ԴԵՄՈԿ. ԲԱՆԻ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Կովկասեան Սօց-Դէմոկ. Բանւորական Միավորին

Բագրայ բանւորներ, բանւորուհիներ և ցարի կառավարութեան բոլոր ճնշւածներ! Հրաւիրում ենք Ձեզ Ձեզ ձեր համարձակ բուրոցն ու զայրոյթն արտայալտել ընդդէմ ցարի կառավարութեան—մեր շահագործողների դաշնակցի, Հ. Արևելքում տեղի ունեցող ոպանզանոցի հեղինակի, ազատ խօսքի ու ժամանակի ու խղճի ազատութեան թշնամու զէմ... Հաւաքեցէք բաղացի փողոցներում կիրակի ժամը | 2-ին։

Ռուսաստանի Սօց-Դէմ. Բանւոր. Կ.-Եան և Հնչակեան Կ.-Եան

ԲԱԳԻԱՅ ԿՕՄԻՏԵՏՆԵՐ

“Թուոցիկ” երկրորդ։

Բոլոր քաղաքացիներին

Մենք, բանւորներս, զուրս կըզանց բազի փողոցները, որպէս զի ամուր և ազատ կերպով ասենց, որ ինցնակալական կազմը, մինչեւ այսմո կենդանի ամեն ինչ ճնշեց՝ պէտք է ոչնչանայ, ճնջի և փոխարինի ազատ կերպով ընտրւած մողովողի ներկայացուցիչների կառավարութեամբ. որ Ճապօնեալի զէմ մզուղ անմիտ, կործանիչ պատերազմը պէտք է զարգացնի. որ մշակւեն նոր օրնցներ, բռնց ապահովին ամեն մի մարդու, ով որ ուզէ նա լինի—հայ, ուսու, հրէայ, թիւրը և այն—միատեսակ հնարաւորութիւն լիահատար մարդավայել կեանց։

Անցեալի փորձից զուր լաւ զիտէք, որ մեր ցոյցերը ոչ մի մասնաւոր մարդու ոչ մի կերպ չեն սպառնում։ Բայց ինչպէս ձեզ յայտնի է կառավարութիւնը թիֆլից զօրք է բերել որպէսզի մեղ հնարաւորութիւնը չը տայ ցոյց կազմել։ Մենք, սակայն, չենք կարող այդ արգելքի առաջ կանգ առնել. ինչ որ լինի մենց գուրս կը զանց ցոյցի և հնարաւոր է, որ Բազի փողոցները արեամբ հեղեղւեն։

Մի լինից անմասնակից հանդիսատեսներ. միացեք մեղ հետ բանի որ մենց կուռու ենց ձեր երջանկութեան համար։ Որբան հսկայական լինի ցոյցը, նոյնքան հաւա-

նական է : Ի կոռավարութիւնը երկիր կրի զննի զիմելու :
Խանգարեցէք ազմինիօտրացիային, ազգեցէք զօրքի
և սպաների վրայ, որպէսզի նորա շը ճնշեն ոյժով ճըն.
շել մէր բողոքը :

Իսոնութեան մենց բանութեամբ կը պատասխանենց !

Խնդրակալական կազմը խեղզում է սեփական յան-
ցանցների մէջ և նրա դէմ մզած միահամուռ, սերտ
զրոհը մեզ յաղթանակ է խսուտանում :

Ով որ պատիւ ու խիզչ ունի, ով որ թանկ է զը-
նահատում իր զաւակների ապացան, իր հայրենիքի ա-
պագան, նա շի մեայ անուշաղիր հանդիսատես և մեզ
կը միանայ :

Դիկ հրապարակ մեր կարմիր զրոշակների տակ !
մենց կռւում ենց ցարի կառավարութեան բոլոր ճնշած-
ների և հարստահարութեան ազատութեան համար :

Մենց պահանջում ենց .—

Այսող ժողովրդից ազատ կերպով ընտրւած Հիմ-
նագրական Ժողովի հրամիրելը :

Ծնդհանուր, հաւասար, ուղղակի և զաղանի ընտ-
րողական իրաւունց :

Իսոլոր ժողովրդների օրէնքի առաջ հաւասարութիւն
առանց սեռի և ազգութեան խորութեան :

Վամուլի, իսոքի, ժողովների, միութիւնների և գոր-
ծադուլների ազատութիւն :

8 ժամեալ բանւորական օր . .

Կորչի՛ ցարի ինքնակալութիւն !
Կորչի պատերազմը !
Կորչի՛ ցարի մանիքէսուը !
Կորչի՛ կապիտալիզմը !

Կեցցէ՛ դէմօկրատական հասարակակետութիւն !
Կեցցէ՛ Ռ. Ս. Դ. Կ. և ասկցութիւն !
Կեցցէ՛ միջազգային Սօց դէմօկրատիան !
Կեցցէ՛ Սօցիալիզմը !

Ռ. Ս. Դ. Կ. ԲԱԳԻԱՅ ԿՕՄԻՏԵՏ

ԲԱԳՈՒ, 14 Դեկտ. 1904

Գործադուլը, որ ընդունել է ընդհանուր կեր-
պարանը, նախաձեռնել, կազմակերպել և դիկավար-
ում է Ռ. Ս. Դ. Պ. կուսակցութեան և Հնչակեան
կուսակցութեան տեղական կօմիտէտների կողմից, ի-
րանց ընտրած յատուկ յանձնախմբի միջացով :

Երեկ, առաւօտեան 6-ին, բանւորների մի խումբ
դիմելով Ռուշիլդի նաւթահանքը, դադարեցնել է տա-
լիս աշխատանքը, բանւորներից մի քանիսը սուլե-
ցընում են սուլիզը, ինչպէս հրդեհի ժամանակ։ Դա
նշան է ընդհանուր գործադուլի։ Ապա խումբ-խումբ
դիմելով զանազան գործարաններ, ամեն տեղ կանգ-
նեցնում են գործը։ Մի քանի ժամանութեամբ
ամբողջ բալախանիում գործերը կանգնեցին և գոր-
ծերի ընդհանուր լուս դադարեան մէջ սկսան հնչել

գործաթուղ բանւորների երգերն ու աղաղակները և
կողակների ձիերի աղմուկը գործադուլի ընթացքում
միաժամանակ սկսում են սատիկանական ձերակալում-
ներ։ Զօրքերը շատ աել միջամտելով, ջանք են ա-
նում ստիպել բանւորներին գործի երթալ տեղի են
ունենում շատ կողմեր ծեծ, մտրակումներ։ Բայց դա ևս
աւելի զրուում է գործաթուղներին և գործադուլն էլ ըն-
դունում է աւելի լայն ու սուր կերպարանը :

Ամեն ֆիրմայում գործերը կանգնելուց յետոյ,
գործաթուղները ստուար խմբերով հաւաքւում են Սա-
րանչի կայարանը, յարձակուում են երկաթուղու
գնացքի վրայ, նպատակ ունենալով այդտեղ ծառա-
յողներին գործադուլ անել տալ, բայց չեն աջողուում։
Միաժամանակ գործաթուղների մէկ այլ խումբ կտրա-
տում է քաղաքի և բալախանի հեռախօսների թե-
լերը :

Առաւօտեան ժամը 9-ից կօգակներն ու սոսի-
կանները սկսում են ձերբակալութեան։ Երբ կայա-
րանի մօտով տանելիս են եղել մի ոուս և երկու
հայ ընկերի, գործաթուղները յարձակուում են սասի-
կանների վրայ և խումբ ազատում ընկերներին թե-
լերը :

Հ. Կ.

ԲԱԳՈՒ 18 Դեկտ.

Գործադուլը շարունակում է ամենաեռանդուն
կերպով և հակայական ծաւալով։ Ամեն օր երկու
անգամ երեք տարբեր կետերում տեղի են ունենում
բացօդեայ միտինգներ, ուր ասւած հրահրիչ ճառե-
րը սօցիալ-դէմօկրատական խօսքն են հնչեցնում բան-
ուրների ականջին, բացատրում են գործադուլի պատ-
ճառները, առաջացնում այն պահանջները, որ պէտք
է անեն գործաթուղները, և ոյլն։ Անեն միտինգին
գումարուում են 4-5 հազար բանւոր։ Առաջա-
րութիւնը զգուշանում է միջամտել և չե խանգա-
րում քաղաքից գուրս կատարւած միտինգները :

Գործաթուղների մի խումբ յարձակուել է բալա-
խանի երկաթուղու վրայ և կոտրատել վագոնների ա-
պակիները։ Նութահանքերում մի քանի տեղ գոր-
ծաթուղների գրգուած խմբերի կողմից փչացնել և
կոտրատել են մեքենաներ։ Առավարութիւնը զգու-
շացել է միջամտել :

Երեկ պիտի տեղի ունենար քաղաքական մեծ
ցոյց, անկարելի եղաւ, նա տեղի կունհնայ ոյս օ-
րերս տասնեակ հազարուոր գործաթուղների կողմից։
Գլխաւոր կոչն է լինելու պատերազմի գաղարումը,
ցարիզմին անկում, ռամկավարական սահմանադրութեան
պահանջ ու սօցիալիզմ, որպէս նաև գործաթուղների
տնտեսական պահանջները, որոնք բազկացած են 34
կետերից։ Ռ. Ս. Դ. Պ. թեան կօմիտէտոյց և Հնչ-
արթեան կօմիտէտոյց ընտրած խառն Յ. Ն. Ճ. ախմբի
ձեռքով այդ պահանջները պիտի ներկայացնեն՝ նաւթ-

արդիւնաբերողների Խորհրդի Համագումարին:

Չեաբարչի բոլոր, ծառայողներն էլ, գործադուլի մէջ և այդ երթեկութիւնը գադարած էր: Այսօր ասկայն, այդ գործաթողները ստացան կատարելով բաւրարութիւն իրանց բոլոր պահանջներում և ձիաքարշը նորից զրւեցաւ երթեկութեան:

Եցրկու օր առաջ բանեցան Ռ. Ս.-Դ. Բ. կուսակցութեան պատկանող երկու տպարանները Ռոտիկանների կողմց տպարանը կոխած միջոցին տեղի ունեցան եօթ ձերբակալութիւն: Խսկ գումարումների միջոցին քողաքի լայօնում ձերբակալել են 200 հոգի, որոնցից պահւեցան բանում 13 հոգի, մնացեալները առջակեցան:

Տարածւել էին լուրեր, թէ իբր նահանքապետի խորհրդում որոշել են զենքի միջոցով բոնութեան ըստ զիմել գործաթողների դէմ: Այդ լուրը, սակայն, սուտ էր: Մեծաբանակ զօրքեր են գումարւել տեղս և թագցւել քաղաքի ամեն կողմերում բակերի, տների և այլ թագստի տեղեր: Երէկ, երբ ցոյց անելու համար համախմբւած մի քանի հազար բանորդներին՝ գործադուլի խառն Յանձնախմբի կողմց՝ հրահանգւեցաւ ցրւել, այդ ցրումից անմիջապէս յետոյ, զօրքերը սկսան խումբնումք դուրս գալ իրանց գործաներից և շրջել քաղաքի փողոցներում իբրև պատրօններ:

Յեղափոխական կուսակցութիւնների զիրքն ու բնիթացը ներկայումս խիստ բնորոշ է: Արդէն ասացից, որ գործադուլը նախաձեռնուել ու կառավարում է Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-Թեան և Հնչակեան Վ.-Թեան տեղական միացած խառն կօմիտէտների առաջնորդութեամբ: Ինչ-ինչ թիւրիմացութիւններ տեղի ունեցան Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-Թեան ծոցում ոմեծամասնութեան և ոփորացման մասնութեան մէջ բայց յետոյ պարզւեց զրութիւնն ու կորդագրւեց: Տիսուր գեր կատարեց մեր նոցինալիստ Գանձնակցութիւնը: Այդ բուրժուական կուսակցութիւնը նաև փորձեց խառնուել գործադուլի գործերում, ի հարկէ, իբրև ոգոյլ գտան մօրթ հագած: Ռ. Ս.-Դ. Բ. և Հնչակեան միատեղի գործող կուսակցութիւնները յետ մղեցին ու ընդունեցին Գանձնակցութեան, չուզենալով գործ ունենալ բանական գործի նկատմամբ այդ անհաւատարիմ տարբերի հետ, որոնք ամեն չանց գործ էին զնում գործադուլի դէմ: Բնորոշն այն է, որ Գանձնակցութիւնն ուղղում էր զլսաւորաբար միջամտել այն բանակցութիւնների մէջ, որ պիտի տեղի ունենալին գործադուլի Յանձնախմբի և նաւթարդիւնաբերողների Խորհրդի Համագումարի միջև: Երբ գործադուլի Յանձնախմբի կողմից բացարձակապէս մերժեց Գանձնակցութեան ոճառայութիւնը, վերջինս անմիջապէս վայր գլորեց իր գիմակը և հրատարակեց մի թռուս այ կ Հրաւիրելով հայերին չ ը մասնակցել գործաթողների նախակութիւնը նախագծեած ցոյցին: Այդ ընթացքը և այդ մտքով նրանց արած ագիտոցիսն միանգամից ընդ

միշտ պարզեց այն ինչ մինչև հիմա այդ կուսակցութիւնը ձգում էր վարագութիւն: Նա ծառայում է հաստափոր բուրժուազիայի շահերին և ուրեմն հակառակ է պրոլետարիատին: Այսպէս կամ այնպէն Դաշնակցութեան այդ ընթացքը ո՛չ միայն նացիօնականական, բուրժուական և հակասօղիալիստական էր, այլ և ուզդակի հակոյելազիոնական է յայտնում, երբ աշքի առաջ ելք առնում այն պայմաններն ու հանգամները, որոնց մէջ կատարւում էին գործադուլը և ցոյցերի պահանջը: Եւ հենց այդ պատճառով Բագուի թէ՛ ամեն յեղափոխական կազմակերպութիւնները և թէ՛ ամբողջ համարակութիւնը, առնոց զասակարգի խորութեան, խիստ գգգոհ ու նախատական վերաբերութիւն ցոյց աւեցին գէպի այդ կուսակցութիւնը որ իբ ահազին աղմկահարութեամբ նմանում է գատարկ կարասի աղմկին:

Կառավարութիւնը գաղտնի կերպով դիմումներ էր արած տեղիս պարսիկներին, խնդրելով արանցից, որ իրան ոօգնեն ցոյցի ժամանակ: Կառավարութիւնը, որ կարծում էր զրանով զրգութել պարսիկներին քր' ստոնեանիրի դէմ: սասցաւ մի գեղեցիկ և արքանաւոր պատասխան: — պարսիկները բացարձակապէս և անպայման մեր ժեք ընդհանր ընկնել իրանց ոնեղայլակից ժողովոգների հետ: Պարսիկների մէջ համարական մեծ հակումն կայ այժմ գէպի հալերը և մասնաւորապէս հայ յեղափոխականները: Ինչ ասել կուզէ, որ պէտք է փութով մշակել սերտ յրաբերութիւններ այդ երկու ժողովրդների միջև:

ԱՐԾ.

ԲԱԳՈՒ, 23 ԴԵԿ.

Գործադուլը շարունակուում է, աւելի բազմացը նելով դէպբերը և խտացնելով շարժումը: Մեր կապիտալիստներն անցեալ օրը որոշում են գործաթողների 34 պահանջներից բաւարարութիւն տալ միայն 22 պահանջի և յայտարարում են, որ այսօր բանաօրները պէտք է սկսեն գործի ժամը 6-ից և գործաթողներից նրանք, որոնք այդ օրը գործին ներկայ ըլլինեն, կը համարեն արժաքաւած և ամսիս 16 ից սկսած ո՛չ մի կօպէկ: Օրվարձ նրանց չի տրւիլ: Բնական է, որ այդպիսի ուրաւարարութիւնը՝ նոյն աշքով չը նկատեց բանաօրների կողմից և երէկ, երեկոյեան յեղափոխական կօմիտէտների ներկայացուցիների ժամանականիստանիրի ժողովին: Առ այժմ հետեւանքը յալտնի չէ և գործադուլը այսօր էլ շարունակուում է նոյնութեամբ:

Այլրակնօրեայ ցոյցը տեղի չունեցաւ այլ և այլ անսպասելի, հանգամանեների պատճառով: Բայց ժաղովուրդը, որ սպասում էր արդ ցոյցին, ահազին քանա-

կաւթեամբ իոնւել էր քաղաքիս կենացնը, զիտաւու բամբչու պարագա բարձր բազուի ամբողջ ազգաբնակութիւնը հոռաքւել էր այշտելու Տեսարա նը հսկայական էր և ազգու: Ցոցարարների մէջ այն պիսի սբանչելի համերաշխառթիւն կար, այսպիսի մեծ ոգերութիւն, որ ամբողջ ժողովոդի հիացումն էր գրգում: Խրաբանչելի 15 մօսէ կարգագրութիւն էր գալիս գործագուլի Յանձնախմբի կողմց — և գալունում էր հրաշուի տպաշորութիւն ամենի վրա: Կառավարութիւնը, որ յատուկ յայտարարութիւններով հրամայել էր ոչ մի գումարում չանել, այդ օրը բագրիկան իսկ գուրս չէր հանել և իր զօրքերն նոհնեմ կերպով պահել էր թագստոցներում:

Եւաւոտեան ժամը 9-ից մինչև 2-ը այդ գըրութիւնը տևեց երբ այդ ժամին կարգագրութիւն եկաւ գործ, Յանձնախմբի կողմից, որ ցուցարարներու պէտք է ցըւեն: Ինչպէս էլ եղաւ սմենայն հանդար, տութեամբ, և այդ օրը, այդպիսի, բագում չը տեսնուած բազմութեան մէջ մի փոքրիկ իսկ անկարգութիւն չը պատահեց:

Եյսօր սակայն տեղի ունեցան ծանր գէպեր: 10,000 գործաթողներից կազմւած մի միահինգ յետոյ, ոոկատարւեց բաց դաշտում, 4000 բանուոր բաժանելիով միւսներից զիմում են գէպի այն նաւթահանքերը, ուս այսօր, կապիսալիսաներին լսելով մի մասը բանուորներից սկսել են աշխատել: Գործաթողները պահոնչելով գործը զարգարեցնել, յարձակում և ջարգում են մեքենաները: Միջամտում են կօլտէները զօրքերը: տեղի է ունենում քարեճը գործութիւններ և պայմում են մէկ-երկու ատքանակ: Տեղի է ունենում սոսկալի ընդհարում: սպանում են մի կօլակ և մէկն էլ վիրաւորում: սպանում են զեց բանուոր և 10-15 վիրաւոր: Նոյնանման արինս հեղ ընդհարումներ տեղի են ունենում նաև Քիբէ-Եյբաթ: Պի քանի տեղի աշխատանքը սկսած նաւթահանքերի վայ յարձակման միջնին՝ գործաթողները հանդիպում են զօրքերի զիմազրութեան, որոնց թիւը համար էր 1000-ի: Այդուղ էլ սպանում են երկու կօլակ: բանուորների կողմից 15 հոգի սպանւած ու վիրաւոր: Այդ թւերի ստուգութիւնը առ այժմ չենք կարող երաշխատորել:

ԱՐՄ.

ԲԱԴՈՒ, 29 դեկտ.

Մի քանի յաւելեալ տեղեկութիւններ ևս ամսիս 23-ի արինահեղ գէպերի մասին: Ընդհարումը տեղի ունեցաւ կեսօնայ ժամ երկուսից յետոյ: Հըսկայական միտինգներից վերտարձող գործաթողները յարձակում գործեցին Նորէլի նաւթահանքերի վրա, որպէս զէ այնտեղ աշխատել սկսած բանուորներին արգելք լինեն: Կառավարեալ անթարկեցին նաւթահանքերը, շոգեմբենաները, կառավարչ տունը:

այս այդտեղից յետոյ է, որ տեղի ունեցաւ լնութիւնը կօզակների հետ Արդիւնք գործաթողներից սպանեցան երկու հոգի վիրաւոր 16 հոգի որոնցից մի քանիսը ծանր և 15-20 հոգի ձերբակալւած: Ճիշդ նոյն պատկերը նոյն ժամին ներկայացնում էր նաև Քիբէ-Եյբաթ: Սարսափ ընկաւ նաւթարդիւնաւ բերների վայ: սարսափի մէջ էր ամբողջ քաղաքը գործաթողների ձեռքն էր անցել, ասես, ամբողջ բազարը և այդ օր էր որ նրանք ցոյց տւին թէ մը բողջ բազւի ձակատագիրն իրանց ձեռքն է: Անկաշը բելի եղաւ զսպել նրանց կատաղի հոսանքը: Ու Ստուգ կ. կ. եան և Հնչակեան կ. եան միացնելով կատարութիւնը էր նրանց անմարներին, զանալով սակայն նըրանց նախազգուշացներուն այդ օրն փոքրեց մէջ մտնել: Նրանք ինքնապաշտպանութեան կօմիտի անունով երեան եկան, ներկայանալով իրեկ բանուորների պահպանների այդտարութիւնը կարգանցութիւններուց, և այլ նոյնօրինակ ընթացքից, որպէս նաև գըրտունով նրանց զը մասնակցել ցորքի յարձակման: Դաշնակցութիւնն այդ օրն փոքրեց մէջ մտնել: Նրանք ինքնապաշտպանութեան սկսիտեան անունով երեան եկան, ներկայանալով իրեկ բանուորների պահպանների պահպանների մէջ, յորդորելով նրանց զը մասնակցել ցոյցերին: Գրա ազդեցութեան տակ սեղական ինտելիգենցիան սկսաւ յարձակւել ցուցարարների վրայ, համեմելով թէ ոռւմները հայերին մէտեղ գցեցին, իրանք անհետացան, և այլ նոյնօրինակ գրգռող ու պառակտիչ քարոզներ:

Գործաթողների չորս ներկայացուցիչները — երկու Հնչակեան և երկու հոգի էլ Ու Ստուգ կ. թեան անդամներից — բանակցութիւն ունեցան կապիտալիստների Համագումարի Խորհրդի հետ, և սմենից առաջ պայմանաւորւեցաւ այսպէս: ի նը ժամ և մւայ աշխատանքների գիրք ու որ և վարչութեան համար 10-20 տոկոս բայց կապիտալիստների այդ առաջին գլխաւոր զիշումները գեռ չի յայտարարւած, սկսւեցաւ նաւթահանքերում մի սոսկալի հրգեհ: Արւեցան բալախանիում ութուն նաւթահոր, մեծ քանակութեամբ շտեմարան ած պատրաստի նաւթ: Հարիւրին 95. ը տուժեցին Նօրմէլ, կասպեան ընկ. և առհասարակ զրանց նման հարուստ Փիրմաները թաթարների կողմից տեղի ունեցան հրացանաձգութիւն, գողութիւն: Երեկոյեան ժամը 6-ից ի վեր նաւթահանքերում ոչ մի զինուարական էր համաձայնում մմալ: Իսկ միտին գունուարակութիւնը անընդհանուր էր ազատ: Ու Ստուգ շարունակութիւն են անընդհանուր և ազատ: Ու Ստուգ կ. թեան և Հնչակեան կ. թեան բազւի կօլակ տեղերը, իրեկ կազմակերպելուն այդ հսկայական, անմուանալի և վերջին հաշուվ պրոլետարիատի համար յաղթական գործադուլի, Յայտարակութիւնը ցըրւեցին, հրաւիրելով բանուորներին ամսիս 28-ին գործի գնալ, համաձայն գործաթողների ներկայացուցիչների և Համագումարի Խորհրդի պայմանաւորներ:

Եւ թէւ այսօր 20 է, և գործաթողները ամենքը դեռ
չեն անցել գործի, բայց յւս կայ, որ մի քանի երկ-
րորդական բաւարարութիւններ էլ ստանալով, բան-
որները վերջ կը տան գործադույնն:

Բայախուանի իում սպանւած բանւորնիրի մարմիննեւ-
րըն ամսիս 26-ին բերին քաղաք թաղելու։ Յուղար-
կաւորութեան ներկայ էին մեծաքանակ բանւորներ։
Փորձեցին կարմիր դրոշ՝ կ պարզել, բայց ոստիկանու-
թեան հետ տեղի ունեցաւ ընդհարում։ Սպանւած
ընկերների դադարդ ելի վայ դրւեցաւ կարմիր ժագաւէն
հետեւաչ վերտառութեամբ ուստերէն։ — „Թանկագին ըն-
կերներին! Թո՞զ կորչի՛ միապետութիւնը! “ գերեզմանա-
մուււ երկու կրակոտ ձառ ասւեցան և ցրւելով պրոկ-
լամացիանել, պարզեցու յեղափոխական կարմիր զը-
րօշակ։

գործադուլի ժամանակամիջոցի համար ամբողջական թոշակներն ամսով վարձած բանւորներին և թոշակների հետը օրավորձ բանւորներին։

ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՒ ԶԵՂ

Յաւօք սրտի տեղեկանում ենք, որ դեկտեմբեր առի մէջ Մէզլուի (Խարբերդ) հրապարակի վերայ, մեծ դաշնապետ Համբուի հրամանով գլխաւուել են Հնչ. երկու կարող և անձնութաց գործիչներ — Զարայի Ղարաբօղազ գիւղացի Գալուստ (Յակոբ) Անդրէասեան և Շապին Գարահիսարցի Յարեթ Թէւէբէլ-եան, որոնք 10—13 տարուց ի վեր ամենայն եռանդով ու անձնութեամբ, բայց և շատ լոիկ մնջիկ գործում էին: Այդ երկու անձնուրաց ընկերները ձերբակալեցին 1903 թ. յունիսի մէջ Խարբերդու մուտքաւորապէս մէկ և կէտ տարի մարտիրոսական կեանք վարելուց յետոյ Նահատակ եցան գլխաւումով:

Frankfurter Zeitung-ը հաղորդում է, որ Ուիզա
փաշան. Սուլթ անի թիկուապահը, Բերտիի ճաշաբաննե-
րի մէկից գուրս գալու ժամանակ կիւրակի օրը յար-
ձակման ենթարկվեց չորս անյայտ անձերից և ծան-
րապէս վիրաւորւեց: Հաւսնական է որ քաղորդական
բնաւորութիւն ունենալ այս գէպը:

“Նչակ”ի ներկայ համարն արգեն աւարտ ու
պատրաստ էր, երբ հեռագիրները հաղորդեցին Ս Պե-
տերբուրգում պայման հսկայական գործադրություն և այն
մեծ ու ահաւոր յեղափոխական շարժումները, որ սոս-
կալի որիւնչեղութեամբ սկսւեցան ամսիս 21-ին և
ահա երեք օր է, ինչ տակաւ ին շարունակում են
Այդ բոլոր գեպերի նկարագիրը լոյս կընծայենք մօ-
տերս ո Հնչակ”ի ներկայ համարին կցւած յատուկ Յա-
ւելածով:

Դարամ, մանղատ և այլն ուղարկել հետեւալ

M BELLART Poste-Restante Bureau N° 52
(France) PARIS.

Imprimeur-Gérant : Gabriel FARJAT

7, Rue Campagne Première, PARIS

Imprimerie Spéciale du « HENTCHAK »